ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Մոնթե Մաթևոսյան

ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Հիմնաբառեր. *միջնադար, եկեղեցի, խաչքար, քիվ, արմավակարդ, նուռ, խաղող, խաչբուռ:*

Ս. Կարապետ եկեղեցին գտնվում է Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում (նախկինում՝ Ռնդամալ): Ճարտարապետական հորինվածքով ուշ շրջանի եռանավ բազիլիկ է: Թաղակապ տանիքը պահում են երկշարք 6-ական փայտյա սյուները: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ բազալտ քարից: Այն կառուցվել է 1628 թ., սակայն ներկայիս տեսքը 2004-2008 թթ. վերակառուցման արդյունքն է: Մինչ վերջին վերանորոգումը եկեղեցին երկու անգամ վերանորոգվել է 1831 թ. և 1880-ական թթ.[1]:

Եկեղեցուն հարող տարածքում գտնվում են մեկ տասնյակից ավելի խաչքարեր[2]: Արվեստի այս ստեղծագործությունները մասնագիտական գրականության մեջ առանձնացվող «Կոտայքի ոճի» «Հրազդանյան տիպի» մի մասնիկն են: Խաչքարերի «Հրազդանյան տիպի» վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ է հաղորդում հետազոտող Տ. Վարդանեսովան[3]:

Ս. Կարապետ եկեղեցուն մերձակայքում գտնվող խաչքարերը թվագրվում են IX-XVII դդ.: Դրանք հիմնականում գտնվում են եկեղեցու արևելյան, հարավային և հյուսիսային հատվածներում: Խաչքարը թվագրելիս արձանագրության բացակայության դեպքում օգնում են հորինվածքային առանձնահատկությունները, իսկ այդպիսիք՝ առանց արձանագրության խաչքարերը, հետազոտության առարկա տարածքում գերակշռող են: Վաղ շրջանի խաչքարերը, ինչպես բնորոշ է ողջ խաչքարային արվեստին, ավելի պարզունակ են հորինվածքային առումով:

IX-X դդ. ձևավորվեց խաչքարային արվեստը, որը ժամանակի ընթացքում կատարելագործվեց: Վաղ շրջանի խաչքարերում «արտապատկերում» էին միջնադարյան կոթողները և հորինվածքները[4]: Ս. Կարապետ եկեղեցու շրջակայքում գտնվող վաղ շրջանի այդ ստեղծագործությունները նույնպես մտնում են այս բնորոշման մեջ: Դրանց կենտրոնում գտնվում է մեծադիր խաչը, որից ներքև արմավատերև է պատկերված: Խաչի վերին թևից դուրս են գալիս ճյուղեր, որոնք վերջանում են խաղողի և նռան պատկերներով:

Խաղողի պատկերումը խաչքարերում բավականին շատ է տարածված: Քրիստոսի՝ որպես որթի և խաղող-ողկույզի ընկալումը սերտորեն կապվում էր նաև խաչի և խաչելության հետ: «Քրիստոսը ինչպես խաղող «ճզմվեց» խաչի վրա՝ թափելով արյունը, որպեսզի ապրեցնի մարդկությանը»[5]: Քրիստոսը նույնպես իրեն համեմատում է խաղողի որթի հետ[6]: Խաղողի պատկերման միջոցով այգեգործ հայ գյուղացուն քրիստոնեական ուսմունքը բացատրելը բավականին հեշտ կլիներ[7]: Խաղողի պատկերագրությանն ենք հանդիպում եկեղեցու ձախ ավանդատան պատին ագուցված խաչքարում (նկ. 1): Ստեղծագործության պատկերագրությունը բնորոշ է վաղ

** Հոդվածը ներկայացվել է 26.04.2020 թ., հրատարակության երաշխավորել՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Սեյրանուշ Մանուկյանը (26.04.2020 թ.), ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Սարգսյան Գ., Ջրառատի Ս. Կարապետ եկեղեցին, Հին Հայաստանի մշակույթը, պրակ XIII, Ե., 2005, էջ 232-238:

[2] Խաչքարային արվեստին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ՝ Գարեգին Հովսեփյան, Բաբկեն Առաքելյան, Լևոն Ակարյան, Կարո Ղաֆադարյան, Սիրարփի Տեր-Ներսեսյան, Ստեփան Մնացականյան, Արգամ Այվազյան, Սեդրակ Բարխուդարյան, Աբրահամ Շահինյան, Անատոլի Յակոբսոն, Համլետ Պետրոսյան, Տատյանա Վարդանեսովա, Հրայր Բաղե Խաչերյան և ուրիշներ: Սակայն մեր աշխատանքի համար որպես ելակետային աշխատանքներ հանդիսացել են Համլետ Պետրոսյանի և Տատյանա Վարդանեսովայի աշխատանքները:

[3] Տե՛ս Варданесова Т., Культура Хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв., Е., 2016, с.156:

[4] Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար, Ե., 2014, էջ 11:

[5] Տե՛ս Պետրոսյան Հ., Հայ միջնադարյան պատկերացումները իդեալական կենսատարածքի և կենսընթացի մասին. աշխարհը որպես այգի, «Հանդէս ամսօրեայ», 2002, էջ 417:

[6] Տե՛ս Նոր Կտակարան, Յովհաննէս, գլ. 15, 1.2:

[7] Տե՛ս Պետրոսյան Հ., Հայ միջնադարյան պատկերացումները..., էջ 418:

շրջանի աշխատանքներին (IX-X դդ.)[1]: Խաչքարի կենտրոնում խաչն է պատկերված, որի ստորին հատվածից վեր են բարձրանում արմավազարդի երկու ճյուղերը: Խաչի վերին թևից դուրս եկող ճյուղերն ավարտվում են խաղողի ողկույզներով: Խաչի թևերի եզրերը մանր գնդիկներ կամ բլթակներ են, յուրաքանչյուրի վրա 2-ական: Խաչի կենտրոնում վարդյակի պատկեր է: Ոչ միայն պատկերագրությունը և խաչքարի չափերն են հուշում նշված ստեղծագործության՝ վաղ շրջանի պատկանելության մասին, այլև սա հետազոտության տարածքում գտնվող այն եզակի խաչքարերից է, որը մասնագիտական գրականությունում թվագրվում է: Համեմատելով Ջրառատ թաղամասին հարակից մյուս շրջանների՝ Մեղրաձորի, Լեռնանիստի և մյուս շրջանների միևնույն ժամանակահատվածով թվագրվող խաչքարերի հետ՝ տեսնում ենք պատկերագրական ակնհայտ նմանություններ: Մասնավորապես խաչքարի օվալաձևությունը, խաղողի ողկույզների, արմավազարդերի, բազմատերև վարդյակների միևնույն ձևով կիրառումը, խոսում են այն փաստի մասին, որ X դ. Հրազդանում գոյություն են ունեցել խաչքարի պատկերագրության հստակ կանոններ: Խաչասալերի վերին հատվածը ավելի լայն է ստորին հատվածից: Սա բնորոշ է ոչ միայն վերը թվարկված արվեստի ստեղծագործություններին, այլև X դ. պատկանող մյուս խաչքարերի զգալի մասին:

Ս. Կարապետ եկեղեցու շրջակայքում կան IX-X դդ. թվագրվող այլ խաչքարեր: Քանի որ IX-X դարերը ընդունված է համարել խաչքարային արվեստի ձևավորման փուլ, այս ժամանակահատվածում ստեղծված խաչքարերը համեմատաբար պարզունակ են: Եկեղեցու արևելյան և հարավային հատվածներում գտնվում են IX-X դդ. աշխատանքներ: Խաչեր են արված բազալտե քարերի վրա: Կարելի է առանձնացնել երկու խաչքար, որ ըստ ամենայնի IX-X դդ. ստեղծագործություն են (նկ. 2-3): Երկուսն էլ բավականին նման են իրար: Կենտրոնում պատկերված է փոքր խաչ: Սալերը փոքր չափերի են: Ինչ վերաբերում է սյուժետային մյուս պատկերներին, ապա դրանք բացակայում են: Կարծում ենք, որ եկեղեցու հարավային մուտքի վերևի հատվածում ագուցված խաչքարը ևս կարող է թվագրվել IX-X դդ.:

X դ. վերջի և XI դ. սկզբի որոշ խաչքարերում արդեն դիտելի է բուն խաչքարային ոճի ձևավորման հեռանկարը, որն ավելի է համապատասխանում սալաքանդակի տրամաբանությանը՝ կոթողայնության զուգորդումը դեկորատիվության հետ: Սկզբնական փուլում դեռևս պահպանվում է քանդակի հստակ տարանջատումը ետնախորքից, բայց քանդակը դառնում է ավելի զարդարուն և երկրաչափական[2]: X դ. վերջում Կոտայքի վաղ շրջանի խաչքարերի վրա զարգացման որոշակի օրինաչափություններ ենք տեսնում: Տերևների բուսական խաչը միջնախաչում փոխարինվում է խաղողի (հետագայում՝ նռան) պտուղներով: Տեսնում ենք, որ խաչի թևերի երկբլթակ ձևերը դառնում են եռաբլթակ կամ եռագունդ:

Ս. Կարապետ եկեղեցուն հարող տարածքում գտնվող խաչքարերից կարելի է առանձնացնել մի քանիսը, որոնք ոճական և պատկերագրական առումով առավել աղերսներ ունեն XI-XII դդ. ստեղծագործությունների հետ[3]: Դրանց վրա պատկերված են խաչ, նուռ և արմավազարդեր խաչի ստորին հատվածում: Այստեղ տեսնում ենք XI դ. խաչքարային հորինվածքին բնորոշ զարդատարրերից մեկի՝ արմավազարդի կիրառումը: Քանի որ արձանագրությունը բացակայում է, նշված աշխատանքի միանշանակ թվագրումը հնարավոր չէ (նկ. 4):

Ինչ վերաբերում է Հրազդանի XI-XII դդ. դ. մյուս խաչքարերին, ապա դրանք բավականին վարպետորեն են արված: Մաքրավանքի, Աղավնաձորի, Բջնիի մի շարք խաչքարեր ունեն գեղեցիկ հորինվածքային լուծումներ և արված են կատարողական բարձր վարպետությամբ: Շքեղ են արված խաչի ստորին հատվածի արմավազարդերը: Կոտայքի XI դ. խաչքարերի վրա տեսնում ենք հետևյալը. հորինվածքը իրենից ներկայացնում է հավասարակողմ կամ երկարաձգված խաչ՝ խորանում, որը կատարված է կրկնակի կիսագլաններով: Խորանի խաչը կանգնեցված է հիմնախարսխի վրա, և խաչի գագաթը զարդարված է արմավենու ճյուղերով, իսկ խաչի թևերը վերջանում են եռակի բողբոջների զույգով: XI դ. դարով թվագրված մի շարք աշխատանքների վրա

[1] *Տե՛ս Варданесова Т., նշվ. աշխ., էջ 30:*

[2] *Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար, էջ 12:*

[3] *XI դ. խաչքարերի մասին կարող եք կարդալ Варданесова Т. նշված աշխ., էջ 158-162; Պետրոսյան Հ., Խաչքար, Ե., 2007, էջ 111-127:*

խաչն ունի բնութագրական բարդ արմավազարդը, որը կազմված է կենտրոնում հանգույցով ամբողջական կառույցի մեջ միացած ուղղահայաց և հորիզոնական մասերից, ընդ որում՝ արմավազարդի հորիզոնական ճյուղերը առավել հատկանշական են: Այստեղ բնութագրական է խորը խորանի կիսաշրջանաձևությունը, որը խաչքարի ուղղանկյուն սալաքարի վրա շրջանակված է զարդանախշի գոտու մեջ: Այս պատկերը հաճախ հաղորդում է քանդակազարդ կամարի գաղափար: Ահա թե ինչու XI դ. խաչքարերի զարդանախշի գոտու մոտիվը հաճախ փոփոխվում է խաչի հորիզոնական թևերի մակերևույթի վրա: Այս բնութագրական հորինվածքը վերը նշված տարրերով պայմանականորեն անվանվում է «Անիի» ոճի հորինվածք: Այսպիսի հորինվածքով խաչքարերը հանդիպում են ամենուր, ներառյալ Կոտայքը: Սա վկայում է այն մասին, որ այս հորինվածքն ունի համայնապարփակ բնույթ և դժվար է որոշել դրա տարածման շրջանը: Ահա թե ինչու XI դ. «Անիի» խաչքարային դպրոցի մասին խոսվում է միայն պայմանականորեն[1]:

Տ. Վարդանեսովան, տալով Կոտայքի XI դ. խաչքարերի բնութագիրը, համեմատական վերլուծության համար խաչքարերը բաժանում է չորս խմբի: Առաջին խմբի մեջ դասվում են հասարակ, արխայիկ տիպի հորինվածքով խաչքարեր, երկրորդում՝ խաչքարեր, որոնք կատարված են ավելի բարձր տեխնիկական մակարդակով, երրորդում՝ «Անիի» վարպետների կողմից ստեղծված աշխատանքներ, իսկ չորրորդ խմբում՝ խաչքարեր, որոնց մեջ XI դ. թվագրված տիպիկ հորինվածքում առկա են ընդհանուր շարքից դուրս ընկնող տարրեր: Այսպիսով, դատելով Կոտայքի տարածշրջանում XI դ. խաչքարերի կառուցվածքի համեմատական միօրինակությունից և զարդանախշային մոտիվների ու դրանց կատարման տեխնիկայից՝ կարելի է ենթադրել, որ ուսումնասիրվող ստեղծագործությունների մեծամասնությանը կանգնեցված է տեղի վարպետների կողմից և միայն մեկ աշխատանք՝ Բջնիի խաչքարը, ստեղծված է Անիի վարպետի կամ վարպետների կողմից, որոնք ունեն քարափորագրության արհեստավարժ ունակություններ[2]:

Խաչքարային արվեստի զարգացման հաջորդ փուլը XII-XIV դարերն են: Խաչքարային հորինվածքը զարգանում է: Սկսում է ի հայտ գալ առաջ եկած քիվը: Արմավազարդերի ուղղաձիգ բաղկացուցիչները փոխվում են խաչբուռների: Խաչերը ձեռքերի մեջ են քանդակվում: Եթե առաջնորդվենք հորինվածքային լուծումներով, ապա Ս. Կարապետ եկեղեցու շրջակայքում կան մի քանի խաչքարեր, որոնք ունեն այդպիսի պատկերագրություն: Նկար 5-ում պատկերված է այդպիսի հորինվածք ունեցող խաչքար: Խաչքարը կարելի է բաժանել երեք մասի՝ քիվ, կենտրոնական հատված և վարդյակ: Խաչը կենտրոնական մասում է գտնվում: Քիվը վնասված է մասամբ: Քիվի մյուս հատվածի վրա խաչ է պատկերված: Կենտրոնական հատվածը շրջապատված է ցանցազարդով: Ուղղաձիգ կենտրոնական հատվածում խաչն է: Վերին անկյուններից դուրս է գալիս երկու նուռ: Խաչից ներքև դուրս է գալիս արմավազարդը, որն ավարտվում է խաչբուռներով: Ներքևի մասում պատկերված է ցանցկեն վարդյակ: Խաչքարի ներքևի երկու անկյուններում խաչեր են պատկերված:

Խաչքարային արվեստի զարգացման հաջորդ շրջանը համապատասխանում է XV-XVII դդ.: Այս շրջանի աշխատանքները դառնում են ավելի սլացիկ: Քիվը ավելի առաջ է գալիս՝ պաշտպանելով մյուս հատվածները վնասվելուց: Վարդյակը ավելի դուրս ցցված է: Կենտրոնական մասում խաչն է պատկերվում, որին եզերում են ցանցկեն զարդերը: Այս շրջանում խաչքարերը ստեղծվում են ոչ թե առանձին դպրոցների առանձնահատկությունների վրա, այլև ընդհանուր ընդունված կանոններով: Խաչքարերում հաճախ հանդիպում ենք արձանագրությունների: Արձանագրություններում նշվում են ստեղծման տարեթիվը, վարպետի, պատվիրատուի անունները: Սովորաբար արձանագրությունները հանդիսանում են այդ խաչքարի վերաբերյալ տեղեկություն պարունակող հիմնական աղբյուրը: Արձանագրությունները արվում են կամ խաչքարի վերին՝ քիվի և ստորին հատվածներում կամ խաչքարի ետևի մասում:

XV-XVII դդ. խաչքար է գտնվում Ս. Կարապետ եկեղեցու արևելյան մասում (նկ. 6): Այն ուղղաձիգ կանգնեցված սալ է: Կենտրոնական հատվածում պատկերված է խաչ: Խաչքարի խորանը սրածայր է: Խորանի վերին հատվածում խաղողի երկու ողկույզ է, որոնք ժապավենով են եզերված: Խաչի ներքևի մասում արմավազարդը ավարտվում է խաչբուռներով: Ներքևի մասում

[1] *Տե՛ս Варданесова Т., նշվ. աշխ., էջ 160:*
[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 161:*

վարդյակն է պատկերված: Խորանի երկու կողմերից քառակուսիների մեջ պատկերված են ծաղկանման զարդեր: Քիվը բավականին առաջ եկած է, որի վրա արձանագրություն է գրված: Արձանագրությունից պարզ է դառնում, որ պատվիրատուն տեր Սարգիսն է և նա բարեխոսություն է խնդրում: Արձանագրությունում, մասնավորապես, գրված է. «Սուրբ խաչս բարեխոսե տեր Սարգսի»: Խաղողի ողկույզների երկու կողմերում գրված է «ԹՎԻ ՌՀԷ»: Այս արձանագրությունից պարզ է դառնում, որ խաչքարը ստեղծված է 1628 թ.: Ստեղծագործության առանձնահատկություններից է հանդիսանում պարսկական գրի առկայությունը: Խաչքարի խաչաթևերի հատույթի ձախ ստորին հատվածում փորագրված է պարսկերեն գրություն, որը, պարզվում է՝ խաչքարի կանգնեցման թվականի կրկնությունն է[1]: Հետաքրքրական է, որ այսպիսի գրություն մյուս խաչքարերի վրա չենք հանդիպում: Պարսկերեն գրի առկայության մեկ ալ դեպք մեզ հայտնի չէ և կարելի է ասել, որ տեր Սարգսի խաչքարը եզակի է այդ առանձնահատկությամբ:

Ուսումնասիրելով Ս. Կարապետ եկեղեցուն հարող տարածքում գտնվող խաչքարերը՝ տեսնում ենք, որ խաչքարային արվեստը պարփակված չէ կոնկրետ ժամանակաշրջանով և այստեղ ներկայացված են IX-XVII դդ. աշխատանքներ: Վաղ շրջանի խաչքարերին բնորոշ է կոթողայնությունը, պարզությունը: Հիմնականում պատկերվում է խաչը, իսկ այլ ատրիբուտների կիրառումը սկսվում է x դ. վերջից: Ինչպես բնորոշ է խաչքարային արվեստին, այստեղ ևս փորձ է արվել հասարակ գյուղացուն մատչելի դարձնել քրիստոնեական ուսմունքը: X-XI դդ. որոշակի զարգացում է ապրում խաչքարային արվեստը: Զարդամոտիվներն ավելի գերակշռող են դառնում: XII-XIV դդ. ընդգծվում են խաչքարերի առանձնահատկությունները: Աշխատանքները ձեռք են բերում ինքնուրույնություն: Ս. Կարապետ եկեղեցուն հարող տարածքում գտնվող XV-XVII դդ. արվեստի ստեղծագործությունները ևս հանդիսանում են խաչքարային արվեստի պատմության մի մասնիկը: Սույն հոդվածը մի փորձ է՝ գիտական շրջանակներին ծանոթացնելու Հրազդան քաղաքի Զրառատ թաղամասի Ս. Կարապետ եկեղեցուն հարող տարածքում գտնվող խաչքարերին և դրանց առանձնահատկություններին:

Монте Матевосян, ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ. Хачкары, находящиеся на территории церкви святого Карапета в Джрарате, датируются IX-XVII веками. Эти хачкары относятся к “разданскому типу” Котайкского стиля.

В хачкарах раннего периода (IX-X века) прослеживается иконографическая однотипность. Первоначально на каменной плите было изображение креста. В дальнейшем хачкар приобретает декоративное развитие. Из нижней части креста выходят орнаменты пальмовых листьев, а из верхнего крыла - гроздья винограда, затем гранат. В XII-XIV веках акцентируется карниз хачкара, который немного выступает вперед. В нижней части креста располагается розетка, в случае отсутствия которой в этой части может находиться запись о заказчике хачкара и о времени создания. Пальмовые орнаменты, выходящие из нижней части креста, заменяются хачбурами. В части карниза приводится запись. Один из хачкаров XVII века выделяется своей записью на персидском, которая повторяет год создания хачкара – 1628.

Исследование комплекса хачкаров показывает, что хачкарное искусство на территории церкви святого Карапета в Джрарате развивалось соответственно средневековому армянскому хачкарному искусству и выделяется как “разданский тип”.

Ключевые слова*: средневековье, церковь, хачкар, карниз, пальмовые листья, гранат, виноград, хачбур.*

Monte Matevosyan, THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH. The khachkars near the St. Karapet Church in Jrarat dated IX to XVII centuries. These khachkars are a part of «Kotayk form» and «Hrazdanyan type». In the khachkars of the early period (IX-X centuries)

[1] *Սարգսյան Գ., Զրառատի Ս. Կարապետ եկեղեցին, «Հին Հայաստանի մշակույթը», պրակ XIII, Ե. 2005, էջ 232-238:*

we see pictorial monotony. In the beginning we see the image of the cross on the slab. Then, in different periods, the khachkar undergoes decorative development. The palm tree emerges from the lower part of the cross, and the bunch of grapes emerges from the upper part and then pomegranate. In the XII and XIV centuries, the khachkar cornice was emphasized, which comes a little forward. At the bottom of the cross there is the rosette (vardyak). The palm tress protruding from the lower part of the cross are replaced by crossbows. Near to cornice is the script. A khachkar from XVII century stands out with its Persian inscription, which is a repetition of the year of the creation of that khachkar, 1628.

The study of the khachkar complex near the St. Karapet Church in Jrarat shows that the khachkar art has developed according to the medieval Armenian standarts art and stands out as «Hrazdan type».

Key words: *Middle ages, church, khachkar, cornice, palm leaf, pomegranate, grape, khachbur.*

Նկար 1. Խաչքար (X դ.)



Նկար 2. Խաչքար (IX-X դդ.)

Նկար 3. Խաչքար (IX-X դդ.)

Նկար 4. Խաչքար (XI-XII դդ.)

Նկար 5. Խաչքար (XII-XIV դդ.)

Նկար 6. Խաչքար (1628 թ.)